323.1(47.925)
L-38
15 JAN 2010

**ԼԵՈ**

# Ան ՑՅԱԼԻՑ

## ԹՂԹԵՐ, ԴԱՏՈՒՄՆԵՐ.

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.
Ն ՓԱՏԵՐԱԶՄ.— ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.

Թյան «Անդրերկրային Կոմիտէ»-ի
Թ Ի Ֆ Լ Ի Ս
1925

Միապաղաղ հայ ազգաբնակչություն ունեցող շրջաններ կազմելու և ապագա ինքնավար Հայաստանի հողը պատրաստելու համար Դաշնակցությունը ձեռնարկում եր բնաջնջել թուրքերին այնտեղ, ուր նրանք փոքրամասնություն եյին կազմում։ Յեվ իրավ, Լևոն Աթաբեկյանը, վոր հետո միայն թողեց Դաշնակցության շարքերը և դարձավ սոցիալ-հեղափոխական, 1905-ին Շուշում սկսված կռիվների գլխավոր ղեկավարներից մեկն եր հայերի կողմից, Թիֆլիսի դաշնակցական կոմիտեյի նիստում պարծենում եր, թե իրենք Ղարաբաղում զբաղված են «հայաստանցիներ» ստեղծելով։ Այդ ժամանակներից եր ուրեմն սկիզբ առնում դաշնակցական հռչակավոր «մաքրել-սրբելը», վոր իդեալ եր դառնում վոչ միայն հասարակ ֆիդայիններին, այլև ինտելիգենտ գաղափարախոսների համար...